13. ԹԱԳԱՎՈՐԻ ՊՋՏԻ ՏՂԵՆ

Կէղնի, չի էղնի թագաւորմ կէղնի։ Էս թագաւորը կունենա իրեք հատ տղա։ Էս տղերքի էրկուսը պսակված կէղնին, մեկն՝ ազապ։ Թագաւորը էս իրան պզտի տղին ինչքան գուզե թե պսակե, ինչ կէնե, չի պսակվի։

— Չէ,— կըսե,— ես չեմ պսակվի, տեյմորի,— կըսե,— ես ուրիշ երկիր չէրթամ, ընձի համար գործ չը ճարեմ, փարա, դոլ-վաթ թոփ չենեմ, ընձի համար մարդ չը դառնամ, ես պսակվողը չեմ։

Մեկ օր էլ, էս տղեն, հորը մնաս բարով կըսե ու գելնի գընկնի ճամբա։ Կէրթա՜, կէրթա՜, կէրթա՜, տեյմորի մեկ բարակ ճամբում կը հասնի։ Կը տեսնի որ, ահան, ուրիշ վեց մարդ էլ էկել էդ ճամբու գլոխը կեցել են։— Բարև ձեզի,— կըսե,— ախպրտիք, ո՞ւր կէրթաք։

— Մենք վեց հոգիս էլ իրար հալալ[1] ախպեր ենք,— կըսեն էս մարդիքը,— մեր երկիրը գործ ու աշխատանք չը կրցանք գտնեինք, քանի գնացինք, ետ գնացինք, տեսանք օր էդպես չի էղնի, մեկ օր էլ խորհուրդ էրինք իրար հետ ու ելանք ընկանք ճամբա, օր ուրիշ աշխատանքի երկիր գտնինք, բալքի մարդ դառնանք։

— Ես էլ ձեզի պես,— կըսե թագավորի տղեն,— արիք ընձի էլ ձեզի հետ ընկեր էրեք, մեկտեղ էրթանք էս ճամբով, տեսնենք հըլա աստված մեզի ի՞նչ դուռ կը բանա։

Էս վեց հոգին թագավորի տղի խոսքին անկաշ կէնեն, ընկեր կը

[1] Հարազատ (Ս. Բ.)։

վերցնեն իրանց, կէղնին օխտը հոգի ու էդ բարակ ճամբեն բռնեն կէրթան։

Ջոր կէրթան, գիշեր կէրթան, տեյմորի կը հասնին մե քաղաքմ։ Քաղաք, հըմը կաշեն մեշը հեչ մարդ չը կա։ Ջարսու, բազար, մեյդան, լավ տներ, բաղչեք, դյուքաններ, բազազի դյուքանը իրան սարքովը, ատթարինը, ըռխալինը իրանց սարքովը, էլ ղազազի դյուքան, մկիտան, ֆռուն, դամրճնոց դյուրկյարխանա, բիրադի լավ, իրանց ղայտի սարքած, հըմը հեչ մեկ գյուքնիմ մեշ էլ մարդ չեն տեսնի։

Էս մարդիքը կը զարմանան.— Ախպրտիք,— կըսեն իրարու,— էս ի՞նչըղ տեղ ընկանք, ախըր առանց մարդու էլ քաղաք էղնի՞։ Էս դյուքան, բազար, ամեն բանը կա ու էս մարդ ընչի չը պտի էղնի մեշը, չէ՛, էստեղ բանմ կա,— ըսին,— տեսնենք հըլա վերշը ի՞նչ պտի դուս գա։

Ետև խորհուրդ էրին էս մարդիքն իրար հետ, օր էդ գիշերը մեկ տան մեջ քնին, առավոտուն ելնին, լավ ման գան քաղքի մեջը, աչեն, տեսնին հըլը, օղորթ հեչ մարդ չը կա էդտեղ։

Գնացին չարսուից իրանց հըմար հաց, միս, ամեն հարկավորություն դյուքաններից թոփ էրին, էկան դյուզ իշան էդ քաղքի թագավորի պալատը, լավ կերան, խմեցին ու ետև ամենը քաշվավ, գնաց իրան համար ջոկ օտեմ քնավ։

Առավոտուն ելան աշեցին, որ իրանցեն մեկը պակսել է, մնացել են վեց հոգի։ Ելան ընկան էս դին, էն դին, սաղ քաղաքը տակն ու վրա էրին, իրանց ընկերին չը կրցան գտնեին։ Ուրիշ մարդու երես էլ հեչ չը տեսան, ու էլի փոր-փոշման ետ էկան իրիկվա դեմ պալատը. կերան, խմեցին ու էլի ամեն մեկը գնաց իրան օտեն քնավ։

Առավոտուն ելան աշեցին տեսան, էլի իրանցեն մեկը պակսել է, չը կա, մնացել են հինգ հոգի։

Էս անգամիս պալատից քաշվան, գնացին ուրիշ տուն քնան իրիկունը։ Առավոտուն ելան տեսան, որ էլի մեկը չը կա, մնացել են չորս հոգի։ Ինչորիսա, ամեն գիշեր էս օխտը ընկերեն մեկ հոգի պակսելով, մնաց վերշը մենակ թագավորի տղեն։

Էս տղեն էլ, մենակ օր մնաց, ելավ ընկավ քաղքի մեջը։

— Ի՞նչ գուզե էղնի,— ըսավ,— ես պտի իմանամ, թե էս իմ վեց ընկերիս գլխուն ի՞նչ փորձանք էկավ, ի՞նչ էղան էդոնք։ Ով գիտե, էղնի որ էս քաղքի մեջը, հըլբաթ մեկ վիշապ, մեկ դև, յա ուրիշ մե ջանավար[1] կա, որ էս իմ ընկերներուս կերավ, ինչ էրավ պար-

[1] Գազան (Ս. Բ.)։

պեց, թե չէ, խո երկինք չը քաշեցին, յա գետնի տակը խո չանցան էդոնք։

Շատ ման էկավ, քաղքի մեշ տե՛ղ չը թողեց, աշեց, հեչ բան չը կրցավ գտնի, ո՛չ չանավար, ո՛չ բան, էլի դարձավ ետ էկավ թագավորի պալատը։ Ամեն քունշ ու պուճախ, ամեն դուռ բացեց, մտավ թագավորի բարութխանեն, սիլլահի օտեն գտավ, չորս դին ման էկավ, տեղ չը թողեց աշեց, ո՛չ դև գտավ, ո՛չ վիշապ, ո՛չ էլ ուրիշ չանավար։

Էս տղի սիրտը շատ ելավ, ինքն իրան շատ նեղացավ, դուս ելավ քաղքեն, ընկավ ճամբա ու գնաց։

— Ես պտի էրթամ էս քաղքեն պրծնիմ,— ըսավ,— թե չէ էս դիշեր իմ գլուխս էլ կուտեն։

Խելիմ տեղ գնաց, հասավ մեկ շայիմ քյանար, աշեց տեսավ որ, ի՞նչ տեսնի, մեկ ղոճա վիշապ կլորվել, էդտեղ քնել է։

— Կա չկա,— ըսավ տղեն,— էս վիշապը կերավ իմ ընկերներուս, էս քաղքի մարդիկներուն էլ, էլի էս վիշապը կերած կէղնի։

Տղեն կայնավ էստեղ, քիչմ միտք էրավ.— է՞, ի՞նչ էնեմ, ի՞նչ չէնեմ էս վիշապին,— ըսավ ինքն իրան մտքի մեշը, էն սհաթին մտքի մեշեն բանմ անցավ, ետ դարձավ էդտեղեն, վազեց գնաց քաղաքը, մտավ թագավորի բարութխանեն, մեշոքմ գտավ, լիքը բարութ լցեց, շալկեց, բերեց վիշապի քովը վար դրեց, վիշապը հեչ չիմացավ, խորունկ քնել էր, հըլա գիշերը պտի զարթեր, օր գար քաղաք մարդ ուտելու։

Տղեն ետ դարձավ, էլի մեշոքը բարութ լցեց, բերեց վիշապի քովը վար դրեց։ Էսպես, տեյմորի իրիկուն կրելով, վիշապի չորս բոլորը բարութը թեշ էրավ։ Որ թեշ էրավ պրծավ, ֆիթիլմ շինեց, քիչմ հեռու իրան համար էլ փոսըմ փորեց, մտավ մեջն ու կրակը ֆիթիլին տալու բաշդան՝ վիշապը հազար կտոր էղավ, ելավ երկնքի օխտը ղաթն ու կտոր, կտոր վար թափավ։ Տղեն մոտեցավ վիշապի պարկած տեղին, տեսավ՝ որ իրան վեց ընկերն էլ էդտեղ վար են թափել, վեցն էլ մեռած, իրեքի կեսերը կար, կեսերն էլ հալել էր փորի մեշը, իրեքի էլ գլխներն էր մնացել։

Թագավորի տղեն արթղ արխեյինն ընկավ, փառք տվեց աստուն, ետ դառավ էկավ քաղաք, մտավ թագավորի պալատը, թագավորի իրան օտեն ընկավ քնավ։

Մեկ օր, էրկու օր, մեկ ամիս, էրկու ամիս էս տղեն էսպես կեցավ էս քաղքի մեշը։ Սաղ վերվերի քաղքի մեշը մենակ ինքն էր,

վիշապմ կար, զաթի էնոր էլ սպանեց պրծավ։ Ման գուքար, կուտեր, կը խմեր, կը քներ, ուրիշ բան ու գործ չուներ։

Էդքան վախտ օր մարդու երես չը տեսավ էդ տղեն, մեկ թարաֆեն էլ օր պարապությունը շատ զոռեց, շատ զզվավ էդ քաղքեն։

Մեկ օր էլ. «Ջա՛նմ, ըսավ ինքն իրան, ախր էսպես էս քաղքի մեջը մնալով մարդու երես չը տեսնելով ի՞նչ կը դառնա իմ օրսդ։ Սիրտը շատ նեղացավ, ընկավ խորունկ մտքերու ետև ու էսպես միտք էնելով մտավ թագավորի խաս բախչեն, մոտեցավ մառմառ հավուզին ու ծառի տակը նստավ։ Շատ միտք էրավ, քիչ միտք էրավ, շատ ու քիչն աստված գիտե, մեկ էլ տղեն գլուխը վեր վերցուց էն տեսավ, որ իրեք հատ աղունիկ, որտից որ էր թռան էկան էդտեղ հավուզի քովը վար իջան, թեպուրները թափեցին, դարձան իրեք հատ աննման աղջիկներ ու մտան հավուզի մեջը լողցան։

Էս թագավորի տղեն էլ դողտուց մոտեցավ հավուզին, էդոնց մեկի թեպուրները գողցավ դրեց ջեբն ու ուսուլով հեռու քաշվավ, գնաց բաղչի մեկ քյոշեն ծառի ետևը պահ մտավ ու էնտից ծկլատեց։

Աղջիկները լողցան պրծան, դուս էկան հավուզեն, էրկուսը իրանց թեպուրները հագան, էլի աղունիկ դարձան, թռան գնացին, մնաց մեկը խեղճ ու շիվար։ Էս դին ման էկավ, էն դին ման էկավ. «Թեպուրնե՞րս, թեպուրնե՞րս» ճվաց, թեպուրը չը գտավ։

— Ա՜յ մարդ, ինս ես, ջինս ես, ով որ ես դուս արի, թեպուրներս տուր, ես թռնիմ էրթամ։

Տղեն դուս ելավ ծառի ետևեն, էկավ աղջկա քովը։

— Ես պահեցի թեպուրներդ լողանալուդ վախտը, հուրի աղջիկ,— ըսավ տղեն,— ահան քովս է։

— Դու էդ ի՞նչըղ սրտի տեր տղա ես, օր էս քաղքի մեջը սաղ ես մնացել։ Վիշապը մարդ չը թողեց էստեղ՝ կերավ. հորս, մորս, ախպըրտանցս բիլա կերավ։ Ես էս քաղքի թագավորի աղջիկն եմ, էն էրկու թռնող աղունիկներն էլ իմ քուրերս են։ Մենք իրեք քուր ենք, վիշապի ահուց էսպես աղունիկի կերպ մտանք դուս ընկանք։ Էս ի՞նչըղ բան է, օր վիշապը քեզի չը կերավ։

— Վիշապին հազար կտոր էրի, երկնքի օխտը զաթը հանեցի։ Թագավորի աղջիկ, մենք օր էս քաղաքը էկանք օխտը ընկեր էինք, վեց ընկերիս կերավ, հրմը ընձի աստված ազատեց, հիմի էլ ո՛չ վիշապ կա, ո՛չ բան, սաղ քաղքի դոլվաթը մեզի է մնացել, թագավորի աղջիկ, արի կէղնի ընձի առ, էս մալ ու դոլվաթը վերցնենք էրթանք. հորս երկիրը, իմ հերս էլ թագավոր է։

Աղջիկը ինքն իրան միտք էրավ, միտք էրավ.

— Լա՛վ,— ըսավ,— գուքամ, դե հիմի բեր աղունիկի թեպուրներս էստեղ աչքիս առաջը վառե, օր չէղնի թե, նեղենալուս թռնիմ էրթամ։

Տղեն ու աղջիկը աղունիկի թեպուրները բռնեցին էդտեղ վառեցին։ Աղջիկը միամտավ, պրծավ, ելան գնացին թագավորի պալատը, իրանց համար տուն ու տեղ էղան, էդտեղ կեցան։

Քանիմ վախտ օր կեցան, ելան մեկ օր էլ էդ քաղքի միջեն ինչ որ կըրցան՝ մալ, դոլվաթ թուփ էրին, ընկան ճամբա, գնացին տղի հոր երկիրը։

Չօր գնացին, գիշեր գնացին, տեյմորի հասան տղի քաղաքը։

Մեկ էլ թագավորին մուժտա տարան թե.

— Թագավորն ապրած կենա, աչքդ լուս,— ըսին,— տղեդ էկավ, մե հուրի աղջիկ ու մալ, դոլվաթն էլ հետը բերեց։

Թագավորը քեֆ-քեֆ էղավ, ելավ իրան ձիավորներովը գնաց տղի ու հարսի դեմը, առավ էկավ քաղաք, հարսնիք էրավ, պսակեց ու հասցուց իրանց մուրազին։